ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 66

14 մայիսի 2013 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀՐ. ՇԱՀԻՆՅԱՆ 212 ՀԱՍՑԵԻ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ (ԾԱԾԿԱԳԻՐ 08-003-002-0026) 325 Ք.Մ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32 հոդվածի 17 կետով և հիմք ընդունելով Մարալիկ համայնքի ավագանու 12 հուլիսի 2011 թվականի թիվ 34-Ն որոշումը, Մարալիկի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի 13 մայիսի 2013 թվականի թիվ 3ա որոշումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան 212 հասցեում գտնվող առևտրի սրահ կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003-002-0026) 325 քառ. մ ընդհանուր մակերեսով հողատարածքի աճուրդային եղանակով վաճառքում հաղթող ճանաչել Մուշեղ Գևորգյանին՝ 166440 / մեկ հարյուր վաթսունվեց հազար չորս հարյուր քառասուն/ դրամ առավելագույն արժեքով:
2. Մուշեղ Գևորգյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 67

15 մայիսի 2013 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ 72 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32 հոդվածի 17 կետի և հիմք ընդունելով Մարալիկ համայնքի ավագանու 31 օգոստոսի 2012 թվականի N 48-Ն որոշումը, Մարալիկի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի 14 մայիսի 2013 թվականի թիվ 4ա որոշումը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարալիկ քաղաքի Բարեկամության փողոցի թիվ 72 հասցեում գտնվող հողատարածքի աճուրդային եղանակով 161840 (մեկ հարյուր վաթսունմեկ հազար ութ հարյուր քառասուն) դրամ առավելագույն արժեքով վաճառքում հաղթող ճանաչել Ռոման Առաքելյանին և այդ հողատարածքի նկատմամբ ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Ռոման Առաքելյանի հետ օրենքով նախատեսված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 68

15 մայիսի 2013 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետ՝ության օրենքի 33 հոդվածի 3-րդ կետով ***որոշում եմ***

1. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 2, դաս 1 (գրադարանի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածի 200000 (երկու հարյուր հազար) թիվը փոխարինել 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) թվով, 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի 100000 (մեկ հարյուր հազար) թիվը փոխարինել 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) թվով:
2. Գլխավոր մասնագետ հաշվապահ Ա. Սաղաթելյանին.

   Նախահաշիվների և ժամանակացույցների մեջ կատարել նշված փոփոխությունները:

**Քաղաքապետ՝** ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 __ թ. _____ ____
ք.Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 69

15 մայիսի 2013 թվականի

ՌԱԴԻԿ ՊԱՐՍԱՄԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 25-ի N 2387-Ն որոշմամբ՝ Ռադիկ Պարսամի Ստեփանյանին պատկանող բնակելի առանձնատունը հասցեավորելու նպատակով ***որոշում եմ***

Ռադիկ Պարսամի Ստեփանյանին պատկանող անհատական բնակելի տունը հասցեավորել ք. Մարալիկ Նոր թաղամաս 9-րդ փողոց տուն N 14:

**Քաղաքապետ՝** ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 __ թ. _____ ____
ք.Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 70

16 մայիսի 2013 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետ՝ության օրենքի 33 հոդվածի 3-րդ կետով ***որոշում եմ***

3. Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 1, դաս 1 (աղբահանում) և տնտեսագիտական դասակարգման 4264 (տրանսպորտային նյութեր) հոդվածի 2-րդ եռամսյակի 180000 (մեկ հարյուր ութսուն հազար) թիվը փոխարինել 2300000 (երկու միլիոն երեք հարյուր հազար) թվով, 3-րդ եռամսյակի 2000000 (երկու միլիոն) թիվը փոխարինել 2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) թվով:
4. Համապատասխանաբար բյուջեի եկամտային մասի 7136 հոդվածի (գույքահարկ փոխադրամիջոցներից) հոդվածի 2-րդ եռամսյակի 4100000 (չորս միլիոն մեկ հարյուր հազար) թիվը փոխարինել 4600000 (չորս միլիոն վեց հարյուր հազար) թվով, 3-րդ եռամսյակի 9000000 (ինը միլիոն) թիվը փոխարինել 9500000 (ինը միլիոն հինգ հարյուր հազար) թվով:
5. Գլխավոր մասնագետ հաշվապահ Ա. Սաղաթելյանին.

   Նախահաշիվների և ժամանակացույցների մեջ կատարել նշված փոփոխությունները:

**Քաղաքապետ՝** **ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20 __ □. _____ ____
□.□□□□□□□